



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

4839



ՀԱՅՈՎԵՑՈՒ ԼԵԼՈՅԵՐԵՅ

ՀՄ


ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ

ՆԵՐՆԵՍԿՈՒԹԻՒՆԸ ԿԵԾՆՔԻ ՄԵջ

1.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԱՏԱՂՈՒԹԻՒՆՆԵՐ

551
14-2



Թ. ի. չ. 1. ի. 2.

Տարբան ՀԱՅՈՎԵՑՈՒ ԸՆԴ. Մագարեան գոր. № 15.
1906 (137)

Արմ.

3-2302₂

17

L-14

29 JUL 2009


3-2302₂

ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ

ՆՅԱԿԱՆԻԹԻՒՆԸ ԿԵՇՆՔԻ ՄԵԶ

1.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ



ԽՆՎ. № 20578

Թ Ի Ց Լ Ի Զ

Տպագութեան հետք Անդրանիկ Փող. № 15
1906 (137)

ՀՆԴՀԱՆՈՒՐ ԴԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ *

I

Իւր գոյութեան առաջին օրերից սկսած մարդկութիւնը ձգտում է բարելաւել իւր վիճակը։ Այդ ձգտումը միշտ եղել է նրա բոլոր գործունէութեան, եթէ ոչ միակ, գոնէ ամենազլաւոր նպատակը։ հետևաբար նրա այժմեան դրութիւնը պէտք է հասած լինէր այնպիսի մի կատարելութեան, որ կարողանար արդարացնել հազարաւոր տարիների ֆիզիքական և մտաւոր աշխատանքի արդիւնքը։

Ինչում է կայանում այդ կատարելութիւնը։

Հնարել են երկու յատուկ գիտութիւն՝ առողջաբանութիւնը և բժշկականութիւնը իրանց դեղորայքի պահեստներով, որպէս զի մարդու մարմինը դարձնեն թուլակազմ, հիւանդու և ջղային, իսկ կեանքի միջին տևողութիւնը կը ճատեն մինչև մի երեսուն տարի, մինչ հնումն, անշուշտ, հարիւրից պակաս չէին հաշվում։

Հիմնել են պետութիւններ իրանց մեծահատոր օրինագրքերով և բիւրաւոր պաշտօնեաներով, բայց ոճին ու շառը օրէ յօր աւելանում են, ստանալով աւելի զգուելի կերպարանք։

Ստեղծել են միջազգային իրաւագիտութիւնը, բայց քաղաքակիրթ աշխարհը գործել է մի լայնածաւալ գորանոց, ժողովուրդները ճնշվում են զինակալութեան (միլի-

*) Այս բրօշիւը հրատարակել եմ Պարիզում սրանից ուղիղ տասն տարի առաջ ֆրանսերէն լեզուով (La justice dans la vie): Հայերէն բնագիրը մինչև այժմ հասրաւորութիւն չունէի հրատակելու ցենզուրական պայմանների պատճառով։

Дозволено цензурою. 9-го Января 1906 г. Тифлисъ.



40735-67

տարիզմ) ծանր լուծի տակ, որպէս զի ժամանակ առ ժամանակ անձնատուր լինեն արիւնահեղ պատերազմների հարիւր հազարաւոր սպանուածներով և աւելի բազմաթիւ վիրաւորներով:

Մարդկային տանջանքների միջից ծնուած և իրանց ժամանակիցներից այնքան քաղցը յոյսերով ողջագուրուած մեծ գաղափարները հետզհետէ յեղաշրջվում են ծաղրալի առեղծուածների:

Այդ բոլորը տեսնելով մարդ տկամայ հարցնում է՝ ինչն է պատճառը, այդ ինչ ոյժ է, որ ջատում է մարդու բոլոր ջանքերը ցանկալի բարօրութեան հասնելու:

Թէպետ մինչև այժմ բացատրուած չէ այդ ուժի բուն էռութիւնը, բայց նա վաղուց գրաւել է մարդու երեակայութիւնը: Մարդկային աշխարահայեցողութեան ամենահին յիշատակարանները կրում են նրա կնիքը. Սիփա չ'աստուածը բրահմայական երրորդութեան մէջ, Ահրիմանը հին պարսիկների կրօնում, Եգիպտացւոց Տիֆօնը, սատանան քրիստոնէական կրօնում, ոչ այլ ինչ են, եթէ ոչ մարմնացումն այդ չար ոգու, որի դէմ դարերից 'ի վեր ուժասպառ կոխւ է մղում մարդկութիւնը:

Զանազան ժամանակների փիլիսոփանները զբաղուել են նրա ծագումը հետազօտելով: Նրանք հաստատել են, որ բացի բնական կամ պատահական դէպքերից, նրա բուն աղբիւրը գտնվում է մարդու իրա մէջ. ոմանք կարծել են, թէ այդ աղբիւրը կրքերն են. բարկութիւնը, վրէժինդրութիւնը, փառամոլութիւնը, աղահութիւնը, նախանձը հայրն. հետեւաբար քարոզել են դրանց ամէն մի արտայայտութիւնը խեղելու համար փոքր առ փոքր սպանել մարմինը: Նրանց իդէալի կատարեալ իրականացումը կը լինէր մարդկային ցեղի սպառումը:

Ժամանակից և աւելի տարածուած կարծիքը չարիքի պատճառը համարում է գոյութեան կոփւր, որի օրէնքով թոյլերը պէտք է կլանուեն զօրեղներից, որոնք իրանց հերթին պիտի զոհ գնան աւելի ուժեղներին:

Եթէ կամենում էք մի ճիշտ գաղափար կազմել այս տե-

սութեան մասին, ձգեցէք մի սրուակի մէջ երկու մորմ (Փալանգա). Կոփւն անմիջապէս սկսում է և վերջանում է նրանով, որ այդ երկու զզուելի միջատներից մինի միայն չորս ատամն (ծնուաները) է մնում. եթէ երբ և իցէ իրականանար ուժեղի այդ տեսակ իրաւունքով ղեկավարուող մարդկութեան իդէալը, այն ժամանակ ամբողջ երկրագընդի վերայ միայն երկու մարդ կը մնար, որոնցից մինը, վերջ ի վերջոյ, կը լափէր միւսին:

Ինչպէս տեսնում ենք, երկու տեսութիւններն էլ տանում են դէպի մի և նոյն նպատակը, բայց զանազան ձանապարհներով. առաջինը մարդու յօժար կամքով, իսկ երկրորդը՝ բնութեան անողոքելի վճռով: Առաջինը մարդկութեան անձնասպանութիւնն է, իսկ երկրորդը՝ նրա անխուսափելի փոխադարձ ջնջումն:

Մի կողմ թողնելով առաջին վարդապետութիւնը, որի քարոզագէանները շատ էլ չեն հոգում մարդկային ցեղի յարատեսութեան մասին, մենք կ'աշխատենք ապացուցանել, որ երկրորդը մի կոպիտ սխալ է, չը նայելով իւր կարծեցեալ գիտնական ծագմանը:

Մանրաղնին վերլուծութիւնը կասկածի տեղիք չի թողնում, որ մարդու կամքով կատարուած չարիքը միայն մի սոսկ թիւլիմացութիւն է, իսկ այն չար ողին, որին հնումն պաշտում էին, իբրև մի խատասիրտ աստուծոյ, և որից մեր օրերում սոսկում են, իբրև մի անխուսափելի ճակատագրից, ոչ այլ ինչ է, եթէ ոչ մարդու կարհասեսութիւնը:

II

Նրանք, որոնք կարծում են, թէ մարդը անասունների պէս պէտք ղեկավարուէ վերոյիշեալ ուժեղի իրաւունքով, մեծ մոլորութեան մէջ են ընկնում, հաշուի չ'առնելով մի գործիչ, որից զուրկ է անասունը: Այդ զործիչը—բանականութիւնն է: Բանականութեան արտայայտութիւններից մինն էլ համերաշխութեան գաղափարն է, որ կարելի է

ձևակերպել այս բառերով. «Ավելի ամենցի համար եւ ամենցը մինի համար»։ Դա ամենաբնորոշ գիծն է, որով մարդկային հասարակութիւնը տարբերվում է անհատաների երամակից։ Դա պարզ և անմիջական հետևանքն է ինքնապահպանութեան բնագրին, որ յատուկ է բոլոր կենդանի էակներին, բայց որը անաստաների մէջ անհատական միջոցներից գէնը չէ անցնում; Եթէ ձիերի երամը երբեմն խմբվում է գայլը տեսնելով, դրա պատճառն այն է, որ նրանցից իւրաքանչիւրը զգում է անմիջական, վայրկեանական վատանգը, բայց եթէ գայլին յաջողի նրանցից մինին վէր զցել, միւսները կը փախչեն, և ոչ մինն էլ չի մտածի օգնել ընկերոջը, որպէս զի սու էլ կամ մի ուրիշը իրան օգնէ միւս զիշերը; Դրա համար հարկաւոր է դատողութիւն, որով օժտուած չէ անաստանը։

Համերաշխութիւնը մի ահեղ զէնք է հասարակութեան ձեռքին իւր անդամներից իւրաքանչիւրին չարիքի դէմ պաշտպանելու համար, բայց հարկաւոր է, որ նա դիտենայ այդ դէնքի գործածելու եղանակը, որպէս զի չը ճնշէ անհատին, փոխանակ նրան հովանաւորելու։ Այդպիսի սխալնքից ապահովելու զրտւականը՝ արդարութիւնն է։

Արդարութիւնը մի գաղափար է, որ մարդկային յարաբերութիւնների համար մի և նոյն նշանակութիւնն ունի, ինչ որ հաւասարակութիւնը նիւթերի փոխադարձ դասաւորութեան համար։ Նա որոշում է իւրաքանչիւրի համար այն շրջանակը, ուր նա կարող է ազատ գործադրել իւր ուժերը, և որից գուրս նա խանգարում է ուրիշներին, բոնաբարում է նրանց իրաւունքը. նա ոչ միայն ճնարաւորութիւն է տալիս իւրաքանչիւրին իւր ուժերի համեմատ բարօրութեան ձգտելու, այլ և նոյն իսկ այդ բարօրութեան ընդհանուր մակերեսոյթը այնքան բարձր է լինում, որքան մի հասարակութեան մէջ ընդունուած արդարութիւնը մօտենում է անպայման արդարութեանը. ձիշտ այնպէս, ինչպէս մի թւի երկու անհաւասար մասերի արգիւնաբարը աւելանում է նոյն չափով, որով պակարգիւնաբարը աւելանում է նոյն չափով, որով պակա-

սում է նրանց տարբերութիւնը, իսկ ամենամեծը ստացվում է երկու հաւասար կէսերի բազմապատկելուց։

Անյիշատակ ժամանակներից ի վեր արդարութեան գաղափարի ցոլացումն ծնել է մարդու սրակի մէջ արդարութեան զգացմանը, այսինքն այն ակամայ պահանջները, որոնց համախմբումը կազմում է խոնմանիքը։ Թէ զգացմունքներն ընդունակ են զօրանալու կամ թուլանալու, կամ խսպառ անհետանալու, դրա ապացոյցը կարող ենք տեսնել, հարց տալով մեզ, թէ, ինչպէս կը վերաբերուէին դէպի որոշ դէպերը մեր նախնիքը, և ինչպէս ենք վերաբերութիւնը մենք ինքներու։ Նայելով այդ գոփոխութեան ուղղութեանը, այսինքն, թէ նա դէպի լաւն է կատարուած, թէ դէպի վատը, մի հասարակութեան համար ասում են, թէ նաև վերածնում է կամ այրասերում է։

III

Արդարութեան սկզբունքը շատ պարզ է. «Մի՛ ամիր ուրիշեներին այն, ինչ որ չես ոգում, որ ուրիշեները մեզ անեն»։ Բայց կեանքի բարդ խնդիրների լուծումը այս սկզբունքով միշտ այնքան հեշտ չի լինում։ Այն օրից, երբ մարդիկ համայնական կեանքի կարիքն զգացել են, նրանք աշխատել են, որքան կարելի է լայն և ձիշտ կերպով իրագործել այս սկզբունքը կեանքի մէջ, ապացոյցը՝ կառավարութեան եղանակի և օրէնսդրութեան աստիճանաբար կատարելագործումը։

Բայց հիմնարկութիւններն ու օրէնքները արդարութեան արտաքին մակերեսոյթն են ցոյց տալիս, իսկ նրա իսկական բարձրութիւնը իմանալու համար պէտք է գիտենալ, թէ մինչեւ ո՞ր աստիճան իւրաքանչիւրը զգում է արդարութեան անհրաժեշտութիւնը, կամ հասկանում է նրա կարելութիւնը։

Բոլորովին պական հողի վերաց մնալու համար ես ենթադրում եմ, թէ մարդս ոչինչ զգացմունք չունի. թէ նրա զործունէութեան միակ զեկավարը եսականութիւնն

է: Տեսնենք, թէ մինչև որ աստիճան նա կարող է չարի-
քից օգտուել իւր անձնական բարօրութեան հասնելու հա-
մար:

Չարիքից որ և իցէ օգուտ ստանալու համար մարդ
պէտք է մէնակ ինքը լինի նրա կատարողը: Հենց որ լոյս
ընկնի մի մըցակից, նա ստիպուած կը լինի այդ օգուտը
կիսել: Իսկ եթէ մըցակիցները շատ լինեն, նա ոչ միայն
չի շահվի, այլ և վնաս կը կըէ, որովհետեւ արդարութեան
մակերևոյթի վայր ընկնելուն միշտ հետեւում է ընդհանուր
բարօրութեան նուազումն, որից վնասվում են ամենքը,
իսկ նրանց թւում և ինքը: Բացատրեմ իմ միտքը մի օ-
րինակով:

Մենք նախապատմական աշխարհումն ենք. ամեն ոք
ապրում է իրան համար: Կազմվում է տասն մարդուց
բաղկացած մի խումբ, որ կողոպտում է, սպանում է ու-
րիշներին: Այդ խումբը կիսով չափ կը կորցնի իւր ոյժը,
հենց որ մի ուրիշ նմանը կազմուի, և բոլորովին անզօր
կը դառնայ, երբ բոլոր հասարակութիւնը բաժանուի հա-
մանման խմբերի: Դրանից միայն վնաս կը յառաջնայ ա-
մէնքի համար, որովհետեւ իւրաքանչիւրն ստիպուած կը լի-
նի մի որ և իցէ զոհաբերութիւն անել, թէկուզ հենց իւր
անձնական ազատութիւնը սահմանափակելով: Բայց այդ
վնասը կարող է իսկական վտանգի փոխուել առաջին խըմ-
բի համար, եթէ երկրորդը կազմուի փոխանակ տամնի՝
քսան հոգուց:

Վերցրէք որ յանցանքը կամենաք. մինը սուտ է խօ-
սում, երկրորդը գողանում է, երրորդը կաշառում է, չոր-
րորդը լրտեսում է, ինսպերորդը սպանում է, վեցերորդը
թունաւորում է և այլն: Դրանք ամենքն էլ իրանց առա-
ւելութիւնները կը կորցնէին, եթէ այդ յանցանքները ընդ-
հանուր ծաւալ ստանային, այսինքն եթէ բոլոր հասարա-
կութիւնը բաղկանար ստախօսներից, գողերից, կաշառա-
կերներից, լրտեսներից, մարդասապաններից, թունաւորողնե-
րից և այլն: Հաւասարակշութիւնը նորից կը վերականգ-
նուէր, բայց այն զանազանութեամբ, որ իւրաքանչիւ-

քի համար այդպիսի հասարակութեան մէջ ապրելը անհա-
մեմատ աւել ծանր, եթէ չասենք անկարելի կը լինէր: Այս
դէպքում չարիքը ազգում է իբրև մի վարակիչ հիւանդու-
թիւն, որ շուտով համաճարակի է փոխվում, վտանգի են-
թարկելով ամէնքին, իսկ ՚ի թիւս այլոց և նոյն չարագոր-
ծին, որ առաջինը պատուաստել էր այն իւր զոհին:

Տեսնում ենք, որ չարիքի դէմ պաշտպանուելու այդ
նախական եղանակն անգամ նրան վտանգաւոր է գարձ-
նում իրեն նախաձեռնողի համար, բայց համերաշխութեան
գաղափարը թելաղը է ուրիշ միջոցներ, որոնք հարուա-
ծում են ոճագործին, առանց դիմչելու ուրիշներին: Այդ
միջոցները երկու տեսակի են, առաջինը՝ նախազգուշու-
թեան միջոցները՝ չարիքի առաջն առնելու համար, երկ-
րորդը՝ քրէական միջոցները՝ նրա հրապոյը խելու համար,
վտանգաւոր դարձնելով նրան:

Այդ միջոցները, ՚ի հարկէ, ամենակարող չեն, որով-
հետեւ հնար չը կայ պաշտպանուելու մի չարագործի գէմ, որ
սպանում է՝ երկու ժամից յետոյ կախաղան բարձրանալու
դիտաւորութեամբ, բայց նրանք բաւարար ապահովութիւն
կը լինէին հասարակութեան համար, եթէ չը լինէր պատ-
ժից խուսափելու հնարաւորութիւնը: Հենց այդ հնարաւո-
րութիւնն է, որ չարիքին տեղի կամ պակաս յարատեու-
թիւն է տալիս:

IV

Մեծ սխալ կը լինէր ենթագրել, թէ հասարակութեան
ապահովութիւնը կախուած է միմիայն օրէնքների կատա-
րելութիւնից և խստութիւնից: Օրէնքները, մինչև անգամ
աշխարհիս ամենալաւերը, ինքնազլուխ չեն գործում, ինչ-
պէս և ամենակատարեալ մեքենան բանի չէ ընկնում ա-
ռանց մարդու նախաձեռնութեան: Հասարակութեան ու-
նեցած միջոցները չարիքի դէմ պաշտպանուելու համար
կարող են ոչ միայն անօգուտ լինել, այլ և մի վտանգաւոր
զէնք դառնալ հենց իրան գէմ, եթէ նրա անդամներից իւ-

բաքանչիւրը պարզ գիտակցութիւն չունենայ արդարութեան անհրաժեշտութեան մասին: Եթէ ոստիկանը օգնէր չարագործին փախչելու, եթէ վկան սուտ խօսէր, եթէ էքսպետը ծուռ հաշիւ տար իր հետազոտութեան մասին, եթէ դատաւորը աղաւաղէր օրէնքի յօդուածների խմասու, եթէ փաստաբանը դադանի համաձայնութիւն կայացնէր իր հակառակորդի հետ, եթէ լրագրի տեղեկատուն հասրովի ճառախօսութիւններ հաղորդէր, այդ խարդախովներից իւրաքանչիւրը անհատի գրութիւնը հասարակութեան մէջ աւելի վտանգաւոր կը դարձնէր, բայ թէ մարդակեր վայրենիների մէջ:

Դրութիւնը օր ըստ օրէ աւելի ծանրանում է, որովհետ չարիքը հետզետէ աւելի նուրբ կերպարանք է ստանում, այնպէս որ պետութեան պաշտօնեաներից՝ բացի կատարեալ բարեխղճութիւնից, պահանջւում է և առանձին ընդունակութիւն և եռանդ:

Վերջապէս, չարիքի վերջին կերպարանափոխութիւնն է այն զգուելի ձեր, որի համար ոչ օրէնք կայ, ոչ պատիժ: Իրաւ է, նա հիմնուած է հաստրակութեան միամտութեան վերայ, բայց այդ հանգամանքը չի խանգարում նրա գոյութեանը: Այդ տեսակի ոճիները այն բարոյական տանջանքներն են, որ պատճառում են թիկունքի յետեր արտասանած զրպարտութիւնները կամ անանուն ու վարագուրուած մեղաղբանքները: Այդ դէպքերում պաշտպանութիւնը ամբողջապէս և բացառապէս պատկանում է հասարակութեանը:

Գուցէ ընթերցողը հարցնէ, թէ ինչու չարիքը աւելի շուտ է զարգանում, քան թէ նրան արգելելու միջոցները, մինչ վերջիններիս համար աշխատում են հասարակութեան ամենալաւ ուժերը: Այդ հանելուկը բացարեկու համար ես յիշեցնում եմ ընթերցողին աղուէսի և կրէայի տուակը, երբ աղուէսը, որոշ տարածութիւն վազելուց յետոյ շուռ եկաւիր զանդաղ հակառակորդին տեսնելու, կրէան արդէն նրանից անցել էր, նա կախուել էր աղուէսի պոչից:

Չարիքը չէ ծաղկում տաղանդի ճիշդերի վերայ. նա

երբէք չէ հաշուել իւր շարքերում. Հերկուէմներ, Շեքսպիրներ, Ռաֆայէլներ, Պատոէօրներ և այլն, որոնք, լնդհակտուակն, յայտնի են եղել իրանց վեհանձն բնաւորութեամբ: Սովորաբար չարագործը լինում է ըոլորովին տափակ կամ սահմանափակ խելքի տէր մարդ, որ միայն այնքան ընդունակութիւն է ունենում, որ մի փոքրիկ փոփոխութեամբ կարողանայ իր օգտին դարձնել հենց այն միջոցը, որ հնարգում է նրան հարուածելու համար: Այսպէս, երկար տարիքի աշխատանքով մարդկային հանձարը հնարում է շոգեկառը, իսկ մի փոքրիկ փոփոխութեամբ հնարաւոր է լինում նրան ծառայեցնել յետ դիմելու համար փոխանակ յառաջ ընթանալու:

Մի հսապարակութեան մէջ անհատի խական ապահովութեան աստիճանը որոշելու համար, հարկաւոր է ըստուգել, թէ նրա անդամներից քանին են համոզուած, թէ իրանց անձնական շահը պահանջում է չարիք չը գործել և նոյնը արգելել ուրիշներին: Եթէ այդ գիտակցութիւնը ընդհանուր է, այն ժամանակ ամէն մինի լուծը շատ թեթև է: Ընդհակառակն, քանի շատ լինեն յանցաւորները կամ անտարբերները, այնքան բեռն աւելի ծանրանում է մնացածների ուսուերի վերայ: Մի որոշ սահման անցնելուց յետոյ անկարելի կը լինի հաւասարակշռութեան պահպանումը, և հսապարակութեան սպասումն կ'սկսի յառաջ քան թէ նա ինքը կարող է այդ նկատել: Կարգալով անձնութէ նա ինքը կարող է այդ նկատել: Տիւանեղձների, ծխանեղձների, անյայտացածսպանների, խեղզուածների կամ յանկարծակի ների, զանազան հիւանդութիւններով կամ յանկարծակի ների, երկար ցանկը, գուցէ ոչ ոք չի մտածի հարմեսածներից շատերը, ցնելու, թէ ինչեր կը պատմէն այդ մեռածներից շատերը, եթէ կարողանային միայն մի բոլէ այս աշխարհ գալ: Եթէ կարողանային միայն մի բոլք տապէր մարդու վլխում, եթէ մինչև անդամ այդ միտքը ծագէր մարդու վլխում, եթէ մինչև անդամ այդ միտքը կարող անուած էլ ծառայութիւն չէր կարող անուած նրան, որովշատ էլ մեծ ծառայութիւն չէր կարող անուած նրան, միջոցներն անհետ ոճիքը յայտնագործելու ամենալաւ միջոցներն անհետ կը մեջին են, եթէ ընսիչ կամքը կամկարգամ անհետեանը կը մեջին, եթէ ընսիչ կամքը կամկարգամ անհետեանը կը մեջին, եթէ ընսիչ կամքը կամկարգամ անհետեանը ծի այսինքն իսում բարոյական տանջանքների ծի տակ լինէր: Էլ չենք խօսում բարոյական տանջանքների ծի տակ լինէր: Էլ չենք խօսում բարոյական տանջանքների ծի տակ լինէր: Էլ ճիշդը չէին կարող ասել:

թէ քանի տարի են խլել իրանց կեանքից օրըստօրէ թու-
նաւորելով նրան:

V

Եթէ ընթերցողը լիովին ըմբռնել է արդարութեան
և համերաշխութեան կարեորութիւնը՝ մինը իբրև զեկա-
վար, միւսը իբրև միջոց՝ իւր սեփական բարօրութեանը
հասնելու համար, նա կարող է հետեւեալ նկատողութիւնն
անել. որովհետև չարիքի հետեւանքը հաւասարապէս հար-
ուածում է ամէնքին, ապա այն մարդը, որ օգտվում է
չարիքից, այնուամենայնիւ մի առաւելութիւն ունի, հա-
մեմատելով այն մարդու հետ, որ չափազանց խիստ է վե-
րաբերվում դէպի ինքը. իրաւէ, հասարակութիւնը աշ-
խատում է իր կարեցածին չափ ոչնչացնել այդ առաւելու-
թիւնը քրէական միջոցներով, բայց խօսքը այն դէպքերի
մասին է, երբ այդ միջոցներից կարելի է խոյս տալ:

Այս, ըստ երկոյթին, այդ առաւելութիւնը կայ, և ով
որ չի ուզում գրանից օգտուել՝ զոհաբերութիւն է անում:
Այդ է պատճառը, որ չարիքը աւելի վարակիչ է, քան թէ
բոլոր տարափոխիկ հիւանդութիւնները: Բայց եթէ գործը
աւելի ուշագրութեամբ քնննենք, կը տեսնենք, որ այդ
առաւելութիւնը մտացածին է: Եթէ չարիքի վերջնական
հետեւանքը աւելի շուտ իրագործուէր, այսինքն նա մատ-
չելի լինէր իւրաքանչիւրի հեռատեսութեանը, այն ժամա-
նակ այսպիսի հարց չէր էլ ծագի: Երբ պատնեշը ճեղք-
ւում է, և քաղաքը ենթարկվում է ջրկոխութեան վտան-
գին, ամեն ոք շտապում է ճեղքուածը փակել, առանց
ուշագրութիւն դարձնելու, թէ հարեւանն էլ նոյն է անում:
Այն ինչ մի ճահիճ, որ պէտք էր ընդհանուր ուժով ցամա-
քեցնել, երկար ժամանակ կը թունաւորէր նոյն քաղաքի
օդը, եթէ ամէնքը միասին ճեղք չը տային գործին: Երկ-
րորդ դէպքում հետեւանքը աւելի ծանը է քաղաքի բնա-
կիչների համար, որովհետև աւերում է նրանց առողջու-
թիւնը, բայց այն առաւելութիւնն ունի, որ կատարվում է

փոքր առ փոքր և տարիք է պահանջում օրհասական վախ-
ճանին հասցնելու համար:

Զարիքի կարծեցեալ առաւելութիւնների տեղութիւնն
ու չափը կախուած են հասարակութեան զարգացման ա-
տիմանից: Նրանք համարեա զրօի հաւասար կը լինէին այն-
պիսի մի հասարակութեան մէջ, ուր իւրաքանչիւր անհատը
մի անյաղթելի խոչընդուն լինէր ամէն տեսակ անարդա-
րութեան դէմ, և ընդհակառակն, նրանք համարեա իրական
գերակշռութիւն կը տային այնպիսի մի շրջանում, որ ըս-
տորացած լինէր մինչև ոչխարային հօար, որ շարունակուս
է անվրդով որոճալ, երբ նրանց մորթում են մէկ մէկ, կամ
փոքրիկ խմբերով:

Այդ վերջին պայմանից դուբս՝ անարդարութեան ամէն
մի առաւելութիւնը երկակայական է:

Բայց տեղիք չը կայ կասկածելու, թէ մարդս կարող
է մինչև այդ աստիճան ստորանալ. Եթէ արդարութիւնն
ու համերաշխութիւնը դաւաճանեն, նրան դարձեալ կը մնայ
պաշտպանութեան նախնական ձևը՝ չարագործին նմանելը,
որով վերջինս այնու ամենայնիւ վաղ թէ ուշ կը կրէ իւր
պատիժը:

Պէտք է, որ անհատը ոչ մի կապով կապուած չը լինի
ապագայի հետ, ոչ խմբական (ազգային, կրօնական, քա-
ղաքական և այլն) շահով, ոչ ընտանեկան զգացմունքով,
ոչ էլ փոքր ի շատ է երկար կեանքի յուսով, որ կարո-
ղանայ ասել:

«Յառաջ քան իմ անարդարութեան անդրագարձ հար-
ուածը ինձ կը հասնի, ես արդէն այս աշխարհումը չեմ
լինի, իսկ ինձանից յետ՝ թէկուզ ջրհեղեղ:

VI

Երբ մարդու մէջ հասունացել է ամէն մի անարդա-
րութեան դէմ մարտնչելու վճիռը, այն ժամանակ միայն
մի դժուարութիւն կը մնայ յաղթելու, այն է՝ ամէն մի
պէտքում, մանաւանդ երբ հակառակ կարծիքների է հան-
գէպքում,

դիպում, որոշել, թէ որ կողմն է անարդարութիւնը: Բնական սխալմունքը այնքան մի մեծ չարիք չէր լինի, եթէ նա չը ծանրանար արհեստականապէս՝ կողմնակի չարամբութեամբ: Բնական սրամտութեան և զարգացման տարբերութիւնը, վարժ լեզուի պնդախօսութեան հետ միացած, կը կարողանային շատ անգամ յեղաշրջել մեծամասնութեան առողջ դատողութիւնը, եթէ չը հանդիպէին համանման ուժերի, որոնք առաջնուներին հակակը են կազմում կամ սոսկ գաղափարի կամ իրանց սեփական շաճերի համար:

Որպէս զի ամբոխը ապահով լինի այդ տեսակ չարամբութիւնից, պէտք է ամէն մի անհատ սովորէ մտածել, որքան կարող է, իր բոլոր լսածը անձնական կրիտիկայի ենթարկել: Կասկածոտութիւնը յանցանք չէ, քանի որ նա չէ անցնում այն սահմանը, երբ կարող է մէկն ու մէկն վնաս հասցնել:

Երկրորդ միջոցը՝ աւելի ուարզը և աւելի ապահովը՝ այն սկզբունքներն են, որոնք ամէն մի մարդու համար պէտք է ուղեցոյց լինեն իր վճիռներն ու գործերը վերաստուգելու համար: Այդ սկզբունքները ոչ այլ ինչ են, եթէ ոչ վերել յիշուած արդարութեան յաւիտենական գաղափարի տարերքը, բայց այդ տարերքը պէտք է լուսաբանուեն ամէն մի ժամանակաշրջանի համար, նայելով այն վարագոյներին, որոնք արհեստականապէս ստեղծվում են մարդկանց աշքից ճշմարտութիւնը ծածկելու համար:

Որովհետեւ արդարութեան ու համերաշխութեան գրլիսաւոր նեցուկը պէտք է լինի իւրաքանչիւրի ներքին համոզմունքը, թէ նրանք անհրաժեշտ են իւր անձնական կամ իւրայինների բարօրութեան համար, ապա ոչ միայն բոնի ստիպութիւնը, այլ և յորդորը անօգուտ են այդ գաղափարի տարածելուն. միակ միջոցն այն է, որ մարդ բացատրէ ուրիշներին, երբ ինքը համոզուած է: Օրինակը այդ գէպում կրկնակի նշանակութիւն ունի. մինը՝ իմաց անել նըրանց, որոնք գեռ չը զիտեն, միւսը՝ քաջալերել նրանց՝ որոնք վարանում են, իրանց մենակ կարծելով:

Անկարելի է միևնոյն ժամանակ արդարութեան երկու զանազան կարակն ունենալ. եթէ նա փոխվում է մի գէպքի համար, ապա փոխվում է և բոլոր միւս գէպքերի համար, ինչպէս և գանակի բերանը չի կարող մի առարկայի համար աւելի սուր լինել, քան միւսի համար. եթէ մի անգամ բթանայ, այդպէս էլ կը մնայ, մինչև նորից սըրուելը, որ բթացած խղճի վերաբերմամբ երկար ու յամառ աշխատանք է պահանջում:

Անձնութացութեան ամէն մի օրինակը, առանց ակրնկալութեան ամէն մի զոհաբերութիւնը յօդուտ մի արդար գործի, ազդում են ինչպէս առողջարար օդի թարմ հոսանքը, մաքրելով այն շրջանի բարոյական մթնոլորդը, ուր կատարվում են. ընդհակառակն, ամէն մի բռնաբարութիւն, մինչեւ անգամ յաջողութեամբ պսակուած՝ աւելի կամ պակաս քայլայիչ ազդեցութիւն է ունենում, նայելով իւր ծաւալին:

Այս ընդհանուր դատողութիւնների նպատակն էր ապացուցանել, թէ անարդարութիւնը, որ կրօններն արգելում են Աստուծոյ անունով, որ խիղճը մերժում է բընազդմամբ, հաւասարապէս դատապարտվում է և մարդկային գոյութեան ու բարօրութեան զօգիկայով: Հետեւեալ գրքոյիններում ես կ'աշխատեմ արծարծել այս հիմնական գաղափարը այն խնդիրների վերաբերութեամբ, որոնք այս ըոպէիս յուղում են քաղաքակիրթ աշխարհը:

ԲԱՐ 01.4 ամիս



1
2
Арм.
3-2302а

Գիւն է 10 ԿՈՊ.

5560
Արմ

ՀՀ Ազգային գրադարան



NL0152106

